



Հաստատված է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 3-ի 18-12-17-03 որոշմամբ

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետի 12-րդ ենթակետը, գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային միավորների անվանակոչության կարգը՝ համաձայն հավելվածի:

## ԿԱՐԳ

### **«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ**

#### **1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.Սույն կարգը կարգավորում է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կառուցվածքային միավորների անվանակոչության կարգը և պայմանները կարգավորող հարաբերությունները: Սույն կարգը չի տարածվում Հիմնադրամի անվանման, ինչպես նաև հիմնադրամի գործունեության տարածքներում գտնվող զբոսայգիների, պուրակների, ծառուղիների անվանակոչության հետ կապված հարաբերությունների նկատմամբ, որոնց անվանակոչության կամ անվանման փոփոխությունների հետ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.Սույն կարգի իմաստով կառուցվածքային միավորներ են համարվում՝

1) քոլեջը, դպրոցը,

2) հիվանդանոցային համալիրները և դրանց կառուցվածքային ստորաբաժանումները,

3) ֆակուլտետները, ամբիոնները, գիտական և ուսումնական կենտրոնները,

4) դասասենյակները, լսարանները, լաբորատորիաները,

5) մասնաշենքերը:

3.Կառուցվածքային միավորները կարող են անվանակոչվել՝

1) Ֆիզիկական անձանց անունով կամ ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) անվանմամբ, եթե այդ անձինք կամ կազմակերպությունները նշանակալից ներդրում ունեն Հիմնադրամի ուսումնական

կամ գիտական կամ կլինիկական ենթակառուցվածքների ստեղծման, վերակառուցման կամ վերազինման կամ նորոգման կամ վերանորոգման գործում: Սույն կետի իմաստով նշանակալից ներդրում է համարվում այդ ենթակառուցվածքների ստեղծման կամ վերակառուցման կամ վերազինման կամ նորոգման կամ վերանորոգման ծախսերի (ներառյալ դրամ կամ գույք կամ սարք, սարքավորումներ) առնվազն 2/3-րդը ֆիզիկական անձի կամ կազմակերպության միջոցների հաշվին իրականացնելը՝ պայմանով, որ

ա. ենթակառուցվածքների ստեղծման, վերակառուցման կամ վերազինման կամ նորոգման կամ վերանորոգման աշխատանքների նախագծային փաթեթները նախապես հավանության են արժանացել հիմնադրամի կողմից և

բ. կնքվել է օրենքով նախատեսված պայմանագիր, այդ անձանց կամ նրանց ընտանիքի անդամների կամ կազմակերպությունների և հիմնադրամի միջև,

2) Հիմնադրամում 35 և ավելի տարի աշխատած և ուսումնական կամ գիտական կամ կլինիկական գործունեության մեջ զգալի ավանդ ունեցող ներկա կամ նախկին աշխատակիցների անունով,

3) Հիմնադրամի շրջանավարտների անունով՝ Հիմնադրամի միջազգայնացման և վարկանիշը բարձրացնելու գործում ունեցած զգալի ավանդի համար,

4) այլ անձանց անունով՝ կրթության կամ բժշկագիտության կամ գիտության այլ ճյուղերում կամ առողջապահության ոլորտներում արձանագրած էական ձեռքբերումների համար:

4. Սույն կարգին համապատասխան անվանակոչություն չի կարող իրականացվել՝

1) հանրային առողջության համար ռիսկեր պարունակող գործունեությունների մեջ ընդգրկված ֆիզիկական անձանց անվամբ կամ կազմակերպությունների անվանումով (մասնավորապես՝ ծխախոտային կամ ակոհոլային արտադրատեսակների արտադրության, իրացման, գովազդի ոլորտում գործունեություն իրականացնող կամ իրականացրած ֆիզիկական անձանց անվամբ կամ կազմակերպությունների անվանումով, մետաղական հանածոների հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող կամ իրականացրած ֆիզիկական անձանց անվամբ կամ կազմակերպությունների անվանումով և այլն),

2) հանցագործությունների համար դատապարտված անձանց անվամբ, եթե դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

## 2.ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Կառուցվածքային միավորների անվանակոչության առաջարկություն կարող են ներկայացնել՝

1) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները,

2) ռեկտորը,

3) պրոռեկտորները,

4) կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

6. Կառուցվածքային միավորների անվանակոչության առաջարկությունները նախապես ներկայացվում են հիմնադրամի նոմինացիոն կոմիտեի քննարկմանը՝ գրավոր կարգով՝ կցելով սույն կարգի 3-րդ կետով սահմանված պահանջների բավարարումը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր կամ գրավոր տեղեկատվություն:

7. Նոմինացիոն կոմիտեում սահմանված կարգով հավանության արժանացած առաջարկությունները այնուհետ քննարկվում են գիտական խորհրդի հերթական նիստում:

8. Հիմնադրամի գիտական խորհուրդը քննարկում է անվանակոչության առաջարկությունը, որը սահմանված կարգով դրվում է քվեարկության: Քվեարկության արդյունքում գիտական խորհրդի հավանությանը արժանացած առաջարկությունը ներկայացվում է ռեկտորին, որը իր հրամանով՝ առաջարկությանը համապատասխան, անվանակոչում է հիմնադրամի կառուցվածքային միավորը: Անվանակոչված կառուցվածքային միավորը ներկայացնող ցուցանակները, անհատականացման ցանկացած այլ միջոց պետք է պարունակի անձի անունը կամ կազմակերպության անվանումը, ում անվամբ անվանակոչվել է կառուցվածքային միավորը:

9. Գիտական խորհրդի հավանությանը չարժանացած առաջարկությունը սահմանված կարգով կարող է կրկին ներկայացվել քննարկման ոչ շուտ, քանի գիտական խորհրդի նիստում քննարկվելուց հետո երեք տարի անց՝ ընդհանուր հիմունքներով:

### **3.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

10. Եթե անվանակոչված կառուցվածքային միավորը հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ միավորվում (միաձուլվում) է այլ կառուցվածքային միավորի հետ, ապա միավորման (միաձուլման) արդյունքում ստեղծված կառուցվածքային նոր միավորը պահպանում է սույն կարգին համապատասխան տրված անվանումը: Եթե միավորվող (միաձուլվող) կառուցվածքային երկու միավորն էլ անվանակոչված են, ապա միավորման (միաձուլման) արդյունքում ստեղծված կառուցվածքային նոր միավորը պահպանում է առավել վաղ տրված անվանումը, իսկ ավելի ուշ տրված անվանմամբ հնարավորության և նպատակահարմարության դեպքում՝ գիտական խորհրդի որոշման հիման վրա ռեկտորի հրամանով կարող է անվանակոչվել այլ կառուցվածքային միավոր:

11. Եթե անվանակոչված կառուցվածքային միավորը հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ առանձնացվում է, ապա առանձնացման արդյունքում ստեղծված կառուցվածքային միավորներից առնվազն մեկը պահպանում է սույն կարգին համապատասխան տրված անվանումը: Եթե առանձնացվող կառուցվածքային միավորը անվանակոչված է եղել տվյալ կառուցվածքային միավորի մասնագիտական գործունեությանը համապատասխան մասնագիտացում ունեցող բժշկի անվանմամբ, առանձնացված կառուցվածքային միավորներից անվանումը պահպանում է այն կառուցվածքային միավորը, որի մասնագիտական գործունեության ուղղվածությունը առավել մոտ է տվյալ բժշկի մասնագիտական գործունեությանը:

12. Եթե անվանակոչված կառուցվածքային միավորը հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ լուծարվում է, ապա գիտական խորհուրդը առանց սույն կարգի 6-րդ կետով սահմանված ընթացակարգի պահպանման, լուծարված կառուցվածքային միավորի անվանմամբ այլ կառուցվածքային միավոր անվանակոչելու մասին որոշում է կայացնում, որի հիմքով ռեկտորը ընդունում է համապատասխան հրաման:

13.Անվանակոչված կառուցվածքային միավորի անվանումը կարող է փոփոխվել միայն այն անվանակոչելուց հետո առնվազն 20 տարի հետո՝ համապատասխան հիմնավորումների առկայության դեպքում՝ սույն կարգով սահմանված ընթացակարգի համապատասխան: